

ԷԿՈՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ, ԴԱՍԸՆԹԱՑ
ԱՆՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ԴԱՍԸՆԹԱՑԻ
ԱՎԱՐՏԻՑ ՀԵՏՈ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

«__» «_____» 2024 թվականի N __ - Ն

ԷԿՈՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ
ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ, ԴԱՍԸՆԹԱՑ ԱՆՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ԴԱՍԸՆԹԱՑԻ
ԱՎԱՐՏԻՑ ՀԵՏՈ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էկոպարեկային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի
3-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

- Սահմանել Էկոպարեկային ծառայության ուսումնական դասընթացում
ներգրավելու, դասընթաց անցկացնելու կարգը և պայմանները,
դասընթացի ավարտից հետո պաշտոնի նշանակման կարգը՝ համաձայն
հավելվածի:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը
հաջորդող օրվանից:

Հավելված

ՀՀ կառավարության 2024 թվականի

_____ -ի N ___-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԷԿՈՂԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ, ԴԱՍԸՆԹԱՑ ԱՆՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՎԱՐՏԻՑ ՀԵՏՈ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- Սույն կարգով սահմանվում են «Էկոպարեկային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) համաձայն Էկոպարեկային ծառայություն (այսուհետ՝ Ծառայություն) դիմած և Ծառայությունում կրտսեր պաշտոնի անցնելու համար Օրենքով սահմանված պահանջները բավարարող, սակայն աշխատանքային ստաժ և բարձրագույն կրթություն չունեցող քաղաքացիներին (այսուհետ՝ ունկնդիր) ուսումնական դասընթացում ներգրավելու, դասընթաց անցնելու կարգը, պայմանները և դասընթացի ավարտից հետո պաշտոնի նշանակման

կարգը:

2. Ունկնդիրների ուսումնական դասընթացը նրանց՝ ծառայությունում պաշտոնի նշանակվելու դեպքում օրենսդրությունից բխող ամենօրյա մասնագիտական խնդիրների պատշաճ իրականացման համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքների և հմտությունների ձեռքբերմանն ուղղված ուսուցման իրականացումն է:
3. Ունկնդիրների ուսումնական դասընթացի հետ կապված ծախսերը կատարվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

4. Ուսումնական դասընթացներն անց են կացվում կրթական ծառայությունների գնման շրջանակներում կրթական ծառայությունների գնման հայտում նշված չափանիշներին համապատասխանող կազմակերպությունների (այսուհետ՝ ուսումնական հաստատություն) կողմից:

2. ՈՒՍՈՒՆԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՅՄԱՆՆԵՐԸ

5. Ուսումնական դասընթացի ընդհանուր տևողությունն առնվազն մեկ ամիս է:

6. Ուսումնական դասընթացի ընթացքում ունկնդիրներն ուսուցանում են կենդանական և բուսական աշխարհի վերաբերյալ տեղեկատվություն, ձեռք են բերում կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հաշվարկման հմտություններ, հակահրդեհային կանոնների պահպանման, ինչպես նաև հրդեհաշիջման աշխատանքների իրականացման հմտություններ, բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության ռեժիմի վերաբերյալ տեղեկատվություն, իրավախախտման արձանագրության կազմման և վարչական ակտերի ընդունման կարողություններ, տեխնիկական միջոցների օգտագործման հմտություններ, ուսումնասիրում են ոլորտային օրենսդրությունը:

7. Եթե ունկնդիրն ուսումնական դասընթացի ընթացքում անհարգալից վերաբերմունք է ցուցաբերում այլ ունկնդիրների կամ դասընթացավարների (դասախոսների) և (կամ) ուսումնական հաստատության այլ աշխատողների նկատմամբ, չի կատարում դասընթացավարի կամ ուսումնական հաստատության այլ աշխատողի օրինական պահանջներն ու ուսումնագործնական առաջադրանքները, արհեստական խոչընդոտներ է ստեղծում դասընթացների իրականացման ընթացքում կամ ցանկացած այլ ձևով խախտում է ուսումնական հաստատության ներքին կարգապահական կանոնները, ապա ունկնդիրը հեռացվում է ուսումնական դասընթացներից և համարվում է ուսումնական դասընթացը չանցած, ինչի մասին ուսումնական հաստատության ղեկավարը գրավոր տեղեկացնում է

Ծառայության պետին:

3. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐԸ

8. Ուսումնական դասընթացի ծրագիրը պետք է առնվազն ներառի՝

1) ունկնդիրների քանակը.

2) տեսական և գործնական պարապմունքների ցանկը, ինչպես նաև դրանց ընդհանուր ժամաքանակը:

9. Ուսումնական դասընթացի ծրագրերը հաստատում է ուսումնական հաստատության ղեկավարը:

4. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄԸ

10. Ուսումնական դասընթացի ավարտին ունկնդիրը հանձնում է ստուգարք, որի արդյունքում ստանում է դրական՝ «Ստուգված» կամ բացասական՝ «Չստուգված» գնահատական:

11. Ունկնդիրը համարվում է ուսումնական դասընթացը չանցած, եթե՝

1) բաց է թողել դասընթացի ընդհանուր ժամաքանակի քսան տոկոսից ավելին.

2) սույն կարգի 7-րդ կետին համապատասխան հեռացվել է ուսումնական դասընթացներից.

3) ստուգարքի արդյունքում ստացել է բացասական՝ «Չստուգված» գնահատական:

12. Ուսումնական դասընթացից հարգելի պատճառով բացակայելու դեպքում ունկնդրին հնարավորություն է տրվում մասնակցելու առաջիկա ուսումնական դասընթացին:

13. Ուսումնական հաստատության կողմից ուսումնական դասընթացն անցած ունկնդիրներին տրվում է համապատասխան վկայական, իսկ չանցած ունկնդիրներին՝ համապատասխան տեղեկանք դասընթացը չանցնելու վերաբերյալ: Ուսումնական դասընթաց անցած ունկնդիրներին տրվող վկայականի ձևը հաստատում է ուսումնական հաստատության տնօրենը:

14. Ուսումնական դասընթացի արդյունքում ուսումնական հաստատության կողմից տրված վկայականը կամ տեղեկանքը կցվում է ունկնդրի անձնական գործին:

5. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱԳԻ ՍՏՈՒԳԱՐՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

15. Ստուգարքն ուսումնական գործընթացի ավարտական մասն է, որի նպատակն ուսումնական դասընթաց անցնող ունկնդիրների ուսուցման արդյունավետության գնահատումն է:

16. Ուսումնական դասընթացի ստուգարքի անցկացման և արդյունքների գնահատման կարգը սահմանում է ուսումնական հաստատությունը:

17. Ուսումնական դասընթացի ստուգարքին չի կարող մասնակցել ընդհանուր ժամաքանակի քսան տոկոսից ավելին բաց թողած ծառայողը:

18. Ունկնդիրների ստուգարքը դրական (ստուգված) գնահատվելու դեպքում, այդ ունկնդիրները երեք աշխատանքային օրվա ընթացքում ճառայության պետի կողմից նշանակվում են համապատասխան պաշտոնների: